քութեան իւրոյ, եւ ձեռնադրեաց անդ եպիսկոպոսունս եօթն. և ապա հաւաքեալ զնուէրս Երուսաղէմի, եմուտ 'ի նաւ յելս Օգոստոսի՝ հանդերձ 250 ուխտաւորօք. եւ յետ անցանելոյ ընդ Նեղուցն, ապա լուաւ թէ եկեալ է Յակոբ Կաթուղիկոս 'ի Կոստանդինուպօլիս։

Արդ 'ի հասանիլ Յակոբայ Կաթուղիկոսի յԻւսկիւտար, եկին յողջոյն նորա ազգայինք, ընդ որս և Ապրօ Զէլէպի հանդերձ Երեմիայիւ. և տեսեալ զքաղցր բարս նորա եւ զառաքինազարդ քաղաքավարութիւն նորին՝ յարեցան 'ի նա, և բաղումք դարձան 'ի կողմն նորա եւ ձեռնտուութեամբ նոցին դիմեաց յԱդրիանուպօլիս, ուր էր Թագաւորն, և ծախեալ 'ի դրունս Իշխանաց 15,000 դահեկանս ընկալաւ յԱրքայէ նոր հրովարտակ, առ 'ի հաստատուն ունելոյ զիւր Կաթուղիկոսական իշխանութիւն նաեւ յերկիր Տէրութեան Օսմանցւոց. էառ և զՊատրիարքութիւնն Երուսաղէմի, և դարձոյց զսոյն 'ի վերայ Մարտիրոս վարդապետի։ Ահաւասիկ խնամաք հրովարտակին, յորում առաջի դնին բանք աղերսագրոյն Յակոբայ. «Կաթուղիկոսունք Էջմիածնի մինչեւ ցայսօր առաքէին զՄիւռոնն առ Հայս բնակեալս 'ի Տէրութեան Օսմանցւոց, եւ յայլ գաւառս, որպէս բացայայտ տեսանի 'ի Կայսերական հրովարտակին, զոր ունիմ 'ի ձեռին իմում, չհակառակիլ ուժեք։ Իսկ այժմ ազգն Հայոց, որ չէր արժան հակառակ օրինաց դրծել, ղեղխազոր վարդապետն հնարիւք եդին Պատրիարք յԵրուսաղէմ. և նա առանձինն եղեւ Կաթուղիկոս, և խոստացաւ բաժանել անտի զՄիւռոնն եւ հատուցանել ամի ամի 'ի դանձն Արքունի 15,000 փողս, որով արգել զանձմանն ժողովրդոց յողորմութենէ և 'ի տրոց սահմանեալ, յաւուրց անտի Սէլիմայ Առաջնոյ. և որոշեալ զրկեցան 'ի մէնջ արք իբրեւ տեղի քան զ6000. և Արքայն Սէլիմ ոչ սահմանեաց տուրս ինչ տալ 'ի դանձն Արքունի, ուստի բարձցի 15,000 փողն այն, և բաժանեսցի Միւռոնն յԷջմիածնէ, որպէս բացայայտ գրեալ է 'ի հրովարտակին, ըստ նախնի սովորութեան, և մի՛ ոք խոչ լիցի Միւռոնին և Կաթուղիկոսական իշխանութեան վերայ, եւ վասն հաստատութեան իրաւանց վերոյ, չնորհեսցի նոր հրովարտակ»։ Յակնարկելն յարձանագրութիւն գիւանին, բաժանումն